ԳՈՐԾԱԴԻՐ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱԴԻՐ ՉԷ ԶԻՋԵԼ ԱՋԱՂԵԿ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ



Հունվարի 15-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց կառավարության հերթական նիստը: Քննարկելով աջաղեկ ավտոտրանսպորտային միջոցների գրանցման սահմանափակման օրինանախագիծը, վարչապետը նշեց, որ կառավարությունը մտադիր չէ զիջումների դիմել այդ հարցում: Նրա խոսքերով, այդ թեմայով քաղաքական շահարկումներ են անցկացվում: «Նախ կցանկանայի կատարել պարզաբանումներ եւ ասել, որ արդեն գրանցված աջաղեկ ավտոմեքենաների սեփականատերերը կարող են վերագրանցել իրենց մեքենաները, որքան ցանկանան: Նրանց ոչինչ չի սպառնում, նրանց սեփականությունն անձեռնմխելի է»,- հայտարարեց վարչապետը: Անդրադառնալով այդ մեքենաների ներկրման սահմանափակման անհրաժեշտության թեմային, վարչապետը նշեց, որ դա ոչ միայն կառավարության, այլեւ հասարակայնության լայն շրջանների պահանջն է: «Եվ մենք չենք զիջի, դա առաջին հերթին, ծառայում է Թբիլիսիի բնակիչների շահերին, քանի որ այդ առումով մայրաքաղաքում իրավիճակը բարդ է, երթեւեկությունը ծանրաբեռնված է եւ, եթե այդպես շարունակվի, ապա իրավիճակն է՛լ ավելի կծանրանա»,- հայտարարեց վարչապետը:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

## ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵ. «ԱՅՍ ՏԱՐԻ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՊԱԿԱՍՈՐԴԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱԶՈՎ ԼՐԱՑՆԵԼԸ ԿԴԺՎԱՐԱՆԱ»

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն հանդիպում ունեցան ադրբեջանական SOCAR ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլաեւի եւ Վրաստանում ընկերության ներկայացուցչության ղեկավար Մայր Մամեդովի հետ:*



Հանդիպմանը կողմերը քննարկեցին առկա գործընկերության շրջանակներին առնչվող հարցեր եւ խոսեցին համագործակցության խորացման մասին: Ինչպես նշեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Ադրբեջանը Վրաստանի ռազմավարական գործընկերն է: «Չնայած վերջին ժամանակներում առկա քաղաքական շահարկումներին, ցանկանում եմ ընդգծել, որ SOCAR-ի հետ ռազմավարական համագործակցությունը կարեւոր նշանակություն ունի մեզ համար»:

Հանդիպմանը քննարկվեց նաեւ Վրաստանի համար անհրաժեշտ բնական գազի հոսքի կարգավորման հարցը: Նշվեց, որ Ադրբեջանից Վրաստան ներկրվող բնական գազի երկու գազատարն էլ գործում են ողջ հզորությամբ: Թեպետ ներկրված քանակությունը ձմեռային շրջանում Վրաստանին բավարար չէ:

Առկա պակասորդը ռուսական «Գազպրոմ» ընկերությունից համալրելու հարցով, այդ ընկերության հետ տարվող բանակցությունների կապակցությամբ էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն հայտարարեց, որ դա անհրաժեշտ քայլ է, քանի որ ադրբեջանական գազով երկրի պահանջարկի բավարարումն անհնարին է: Կախի Կալաձեի խոսքերով, վերոնշյալ բանակցությունների հիմնական թեման առնչվում է Վրաստանով տարանցվող բնական գազի 10 տոկոսի դիմաց ֆինանսական փոխհատուցում ստանալու, ինչպես նաեւ առկա պակասորդի համալրման հարցին: «Այսօր սպառման համար երկրում պահանջվում է 2 միլիարդ 500 հազար խորանարդ մետր բնական գազ: Դա 35-38 տոկոսով գերազանցում է 2012 թվականի ցուցանիշը: 2014 թվականի համեմատությամբ, անցյալ տարի սպառման ծավալը աճել է 19 տոկոսով: Առօրյա մենք ստիպված ենք ներկրել 11 միլիոն խորանարդ մետր լրացուցիչ բնական գազ: Այդ 11 միլիոնից 6 միլիոնը ստացվում է SOCAR-ից, այսինքն՝ այն խողովակաշարից, որը կոչվում է «Կազախ», 2,9 միլիոն խորանարդ մետրը՝ «Շահդենիսից» եւ 2-2,5 միլիոնը ստացվում է տարանցիկության 10 տոկոսից:

Նշենք, որ ռուսական «Գազպրոմ»-ի հետ տարվող բանակցությունները մեծ իրարանցում են առաջացրել Վրաստանում: Ընդդիմադիր միասնական ազգային շարժման պնդմամբ, կառավարության նման մոտեցումը լուրջ սպառնալիք է ներկայացնում երկրի էներգաանկախությանը եւ սպառնում են կազմակերպել բողոքի զանգվածային ակցիաներ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ



## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՆՈՐ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՈՒ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ»

***2016 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, ընտրացուցակների ձեւավորման, ներկայումս գործող պատգամավորների թվից «խաղից դուրս» վիճակում հայտնվելու հավանականության, «Վրացական երազանք» կուսակցության նախագահի պաշտոնում Գիորգի Կվիրիկաշվիլու առաջադրման եւ «Վրացական երազանք» կուսակցության առաջիկա ծրագրերի մասին թերթի հարցերին պատասխանում է կուսակցության գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն:***

***- Բատոնո Իրակլի, նախ մի քանի խոսք՝ «Վացական երազանք» կուսակցության առաջիկա ծրագրերի մասին:***

- Նշեմ, որ կուսակցության հերթական համագումարը կանցկացվի ընթացիկ տարվա գարնանը, որտեղ, նոր նախագահի ընտրության հետ մեկտեղ, ամենայն հավանականությամբ, հասարակությանը կներկայացնենք կուսակցության նորացված քաղխորհրդի կազմը: Միաժամանակ, աշխատում ենք կուսակցության վերակազմավորման ու կառույցների ուժեղացման ուղղությամբ: Մինչեւ փետրվարի վերջը կավարտենք կուսակցության շրջանային կազմակերպությունների ղեկավարության նորացման գործընթացը: Հասարակայնությանը կկարողանանք ներկայացնել մանրակրկիտ մշակված գործողությունների ծրագիրը, ըստ որի էլ շրջանային կազմակերպությունները կսկսեն գործել:

***- «Վրացական երազանքի» անդամները բացահայտորեն խոսում են այն մասին, որ անցած չորս տարիների ընթացքում կուսակցությունը չկարողացավ իրականացնել կառուցվածքային հստակեցումը, նախընտրական ներկայիս փուլում ինչպե՞ս եք ծրագրում իրականացնել նման մասշտաբային վերափոխում:***

- Ցավոք, պետք է խոստովանեմ, որ իրոք կուսակցությունը բավականին պասսիվ էր եւ ակտիվություն էր ցուցաբերում միայն ընտրությունների նախօրեին: Արդյունքում, մեծ թվով հիմնախնդիրներ կուտակվեցին, թեպետ պետք է ասեմ, որ նախապատրաստական աշխատանքներն արդեն բավական ժամանակ է, ինչ ընթացքի մեջ են: Հուսով եմ, որ գարնանը հիմնական աշխատանքներն այդ ուղղությամբ կավարտվեն:

Հարկ է խոստովանել, որ կուսակցությունը գովազդման հետ կապված հիմնախնդիրներ ուներ, թեպետ իրականում մեր կուսակցությունը, Վրաստանում գործող մյուս կուսակցությունների ու կոալիցիաների համեմատությամբ, շատ ավելի կայուն կառուցվածք ունի: Տվյալ պարագայում, միայն ֆինանսական հարցերը ի նկատի չունեմ, մեր կուսակցությունը թե' մարդկային ռեսուրսներով եւ թե' կուտակած փորձով գերազանցում է մյուս քաղաքական միավորումներին, թեպետ ձեռք բերածով բավարարվելը անթույլատրելի է:

***- Եթե ճիշտ հասկացա, ստացվում է, որ կադրերի նշանակման հարցում կուսակցությունը թերացումներ չի՞ ունեցել:***

- Բնականաբար, թերացումներ, այդ թվում՝ նաեւ կադրերի նշանակման ուղղությամբ, եղել են ու կան: Հենց այդ առումով էլ կուսակցության առջեւ ծառացած կարեւորագույն մարտահրավերներից մեկը առաջիկա խորհրդարանական ընտրությունների համար ընտրացուցակներում հստակ սկզբունքային մոտեցման ցուցաբերումն է:

***- Նկատի ունեք մարզիկներին ու դերասաններին ցուցակներում չընդգրկելո՞ւ հանգամանքը:***

- Ողջ պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ առանց բացառիկ անհրաժեշտության, առաջիկա ընտրացուցակներում մարզիկներ ու դերասաններ չեն լինի: Ընտրացուցակները կազմելիս՝ հիմնական շեշտը կդրվի կոնկրետ ոլորտներում փորձառու, արհեստավարժ մարդկանց վրա:

***- Սույն նորամուծությունը ինչպե՞ս են ընդունում կուսակցության անդամ դերասաններն ու մարզիկները: Որքանով տեղեկացված ենք, նրանցից մի քանիսը «խաղից դուրս» վիճակում հայտնվելու դեպքում, կուսակցության ղեկավարությանը սպառնում են հանդես գալ սկանդալային հայտարարություններով:***

- Ինչ խոսք, յուրաքանչյուր ընտրության ցավագին գործընթացը, թեպետ կադրային յուրաքանչյուր հարցը թիմային քննարկման կենթարկվի: Համոզված եմ, որ սույն գործընթացը կոնստրուկտիվ ընթացք կունենա:

***- Ինչ վերաբերում է կուսակցության նախագահի պաշտոնում Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածության առաջադրմանը, ապա դա վերջնականապես լուծվե՞լ է:***

- Այդ հարցով քաղխորհրդում քննարկում դեռեւս չի եղել: Կան նաեւ այլ տարբերակներ, թեպետ գտնում եմ, որ, ելնելով կարգավիճակից ու անձնական հատկանիշներից, Գիորգի Կվիրիկաշվիլին կուսակցության նախագահի ամենահարմար թեկնածուն է, եւ նա կարող է զգալիորեն հզորացնել կուսակցությունը:

***- Վերջերս նախկին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց կուսակցությունից հեռանալու մասին: Ինչո՞վ էր պայմանավորված կուսակցությունից հեռանալու անհրաժեշտությունը:***

- Այդ հարցով Իրակլի Ղարիբաշվիլին անձամբ հանդես եկավ, եւ ինձ իրավունք չեմ վերապահում անդրադառնալ այդ թեմային: Առավել եւս, այդ թեման անմիջականորեն առնչվում է երկրում ժողովրդավարության զարգացմանը: Այսօր արդեն կարող ենք ասել, որ Վրաստանում ավարտվեց որեւէ առանձին անձից կախվածության փուլը: Քաղաքական լիդերները փոխվում են, եւ դա պետական կառույցների փլուզման չի հանգեցնում:

***- Ասում են, որ Իրակլի Ղարիբաշվիլին առաջիկա ընտրացուցակում կներկայացվի առաջին համարով, ստացվում է, որ ընտրացուցակները ձեզ մոտ արդեն պատրա՞ստ են:***

- Բնականաբար, ընտրացուցակների նախնական տարբերակն արդեն մշակել ենք եւ կոնկրետ անձանց հետ էլ խորհրդատվություններ ենք անցկացնում, թեպետ, բնականաբար, մանրամասների մասին ոչինչ ասել չեմ կարող:

***- Նաեւ ասում են, որ նախընտրական փուլում ծրագրվում է Բիձինա Իվանիշվիլու ակտիվացումը: Որքանո՞վ է հավանական կուսակցության լիդերի դերում նախկին վարչապետի վերադարձը:***

- Կուսակցությանն առնչվող տարբեր հարցերով նրա հետ, իրոք, խորհրդատվություններ են անցկացվում եւ, հուսով ենք, որ նախընտրական փուլում նրա հետ ակտիվ համագործակցություն կունենանք: Բիձինա Իվանիշվիլու աջակցությունը «Վրացական երազանքին» նշանակալիորեն կուժեղացնի, ինչն էլ նշանակալի ազդեցություն կգործի ընտրությունների արդյունքների վրա:

***- Դատելով ներկայիս իրավիճակից՝ 2016 թվականի խորհրդարանական ընտրություններին ընտրողները ստիպված չեն լինի ընտրություն կատարել «Վրացական երազանքի» եւ «Ազգային շարժման» միջեւ, քանի որ քաղաքական ասպարեզում հայտնվել են նոր ուժեր: Հատկանշական է նաեւ այն, որ ընտրողների մեծ մասը առաջիկա ընտրությունների համար հստակ դիրքորոշում չունի: Ի՞նչ կասեիք այդ մասին:***

- Եթե նկատի ունեք ND-ի հարցման արդյունքները, ապա հիշեցնեմ, որ այդ կազմակերպության կողմից 2012 թվականին անցկացված հարցման արդյունքները, ինչպես նաեւ մյուս եզրակացությունները հեռու էին իրականությունից: Այնպես որ, ներկայիս արդյունքներով ընտրողների 60 տոկոսի անտարբերությունը իրատեսական համարել չի կարելի: Թեպետ հարկ է խոստովանել, որ կուսակցական կառույցները ներկայիս թուլության պայմաններում որոշակիորեն թուլացրին կուսակցության եւ բնակչության կապերը, սակայն, կրկնում եմ, մենք ունենք անհրաժեշտ ռեսուրսներ իրավիճակի կարգավորման, բնակչությանը հուզող հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալելու համար:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

# ԿԱՊԻԿԸ՝ ՏԱՐՎԱ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԴԵՄՔԵՐՈՒՄ



### ԽՈՅ
### (21.03 - 20.04)

Ճակատագրի կտրուկ շրջադարձերի շրջանը մնաց անցյալում, եւ հիմա՝ 2016-ին Խոյը կարող է զբաղվել առօրյա գործերով: Դուք հաղթահարեցիք լուրջ ճգնաժամ եւ այժմ արդեն ժամանակն է՝ գնահատել սեփական գործողությունները եւ որոշումները, վերլուծել ձեռք բերված փորձը:

Բայց կտրուկ շարժումների ու արարքների սովորությունը, այնուամենայնիվ, ձեզանում դեռ պահպանվում է: Ու դա նկատելի է ե՛ւ աշխատանքում, ե՛ւ տանը:

Մնացեք համարձակ, ինքնավստահ, ակտիվ, բայց մոռացեք ագրեսիան... Միայն այդ պայմանով՝ հաջողությունը կդառնա ձեր ուղեկիցը: Հիշեցեք՝ ձեր խնդիրը նրանում է, որ օգնեք հարազատին, գործընկերոջը, հասարակությանը, ցանկացածի, ով կունենա ձեր աջակցության կարիքը:

Սկզբունքայնությունը, պարտականությունների կատարումը ձեզ հոգեպես կամրացնեն, եւ դուք կհաղթահարեք ձեր առջեւ հառնած ցանկացած դժվարություն:

Միայնակ Խոյերին ճակատագիրը տալիս է շանս՝ ուղղելու անցյալի սխալները,- ձեր երջանկությունը ձեր ձեռքում է: Ուշադիր դիտեք շրջապատը,- եւ կնկատեք, որ երջանկությունը ձեր կողքին է:

Կարիերան հաջողություն կբերի, եթե լինեք ակտիվ ու ձեռներեց: Առավելագույն հաջողությունը սպասվում է հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Տարվա կարեւոր խնդիրներից մեկը՝ առողջության ամրապնդումն է: Ջանացեք պահպանել առողջ ապրելակերպ, գտեք սննդի ձե՛զ հարմար ռեժիմը՝ հակառակ դեպքում կբախվեք առողջական անախորժ խնդիրների:



### ՑՈՒԼ
### (21.04 - 20.05)

Ցուլերին սպասվում է ուրախ, հետաքրքիր, ստեղծագործական տարի: Դուք կկարողանաք ի ցույց հանել ձեր տաղանդները, եւ դա ոչ միայն մեծ բավականություն կբերի ձեզ, այլեւ կօգնի բարձրացնել հեղինակությունը եւ առաջանալ կարիերայում: Հավանական են որոշ առողջական բարդություններ, այնպես որ, աշխատեք ամրացնել օրգանիզմը: Անձնական կյանքը՝ 2016-ին փորձությունների դաշտ կդառնա, բայց դա չի վերաբերվի երեխաներին,- այստեղ ամեն ինչ հարթ է:

Գալիք տարում ձեր խնդիրը՝ սեփական ընդունակությունների առավելագույն դրսեւորումն է: Ձեզանից պահանջվում է լինել հնարավորինս ակտիվ:

Երիտասարդ ամուրիներ, պատրաստվեք ռոմանտիկ հանդիպումների, իսկ դրանք ամուր կապի վերածելը, այժմ, կախված է ձեզանից:

2016-ին, կարիերայում եւ բիզնեսում սկսվում է չեզոք գոտի: Այդ ուղղությամբ չեք ունենա ո՛չ առանձնահատուկ հոգսեր, ո՛չ էլ առաջընթացներ: Դուք, հիմա, ավելի, քան երբեւիցե, ունակ եք լինել առավել ինքնուրույն:

Տարվա առաջին կեսին առողջության թեման կլինի կարեւորներից մեկը, բայց աշնանը առողջական վիճակը կբարելավվի:



### ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ
### (21.05 - 21.06)

2016-ին, ձեր տաղանդներն ու ընդունակությունները կարիերայում ռեալիզացնելու շանսերը պակաս կլինեն, փոխարենը բոլոր հնարավորությունները կտրվեն՝ ամուր ընտանիք կազմելու, բնակարանը վերանորոգելու եւ այն դարձնելու հուսալի թիկունք: Բացի այդ, ձեր շուրջ կհայտնվեն նոր հետաքրքիր ծանոթներ եւ սրտակից ընկերներ: Իսկ տարվա վերջում՝ ձեր ստեղծագործական պոտենցիալը կաճի, ի հայտ կգա լավատեսական տրամադրվածություն եւ ձեր առաջ կբացվեն նոր հնարավորություններ:

Ամբողջ տարվա ընթացքում աստղերը ձեզ կընձեռեն լավագույն պայմաններ՝ բնակարան գնելու, կենսական պայմանները բարելավելու, վերանորոգելու տունը՝ ըստ ձեր ճաշակի:

Եթե դուք պատրաստվում եք ընտանիք կազմել, այդ հարցին տրամադրվեք ամենայն լրջությամբ եւ թող դժվարությունները ձեզ չվախեցնեն: Հասուն զույգերի հարաբերություններում դիտվում է ճգնաժամ, բայց դա սոսկ Աստղերի հերթական «ստուգիչ աշխատանքն է» եւ, թե որքան հաջող կհանձնեք այդ քննությունը, կախված է ձեզանից:

Ընթացիկ տարում չարժի կենտրոնանալ աշխատանքի ու կարիերայի ուղղությամբ: Բայց, եթե առաջարկվի ձեռնարկել որեւէ գործ, եւ դա ինքնաբերաբար գա, ապա ոչ մի դեպքում չհրաժարվեք, ընդունեք ցանկացած առաջարկ:

Տարվա առաջին կեսին՝ Երկվորյակները չեն բողոքի ինքնազգացողությունից: Իսկ երկրորդ կեսին, սեզոնային մրսածությունները ձեզ կարճ ժամանակով կհանեն հունից:



### ԽԵՑԳԵՏԻՆ
### (22.06 - 21.07)

Ձեզ համար 2016-ը կանցնի առանց զգալի սթրեսների, պայմանով, որ առաջին տարեկեսին լուրջ նշանակություն չտրվի անշարժ գույքի ու նյութականի հետ կապված հարցերին: Եթե նույնիսկ ձեր ամբիցիաները ոչ միշտ գտնեն համապատասխան բավարարվածություն, այնուհանդերձ, մնացեք խաղաղ, քանի որ Վերին ուժերի բարյացակամությունը ձեր օգտին է: Դուք 2015-ին երկա՞ր նստեցիք տանը, ժամանակն է սկսել ճանապարհորդել... Այս տարի կարեւոր է նաեւ սովորել ա՛յն ամենը, ինչ ձեզ համար հետաքրքիր է: Նոր տպավորությունները կյանքը կդարձնեն հագեցված ու վառ:

Ի դեպ, երկար ճանապարհորդությունը միայն այն դեպքում է արդարացվում, եթե այն, բացարձակ իմաստով, դիտվի անհրաժեշտություն:

Ձեր կարեւորագույն խնդիրը, հիմա, նոր գիտելիքների ձեռքբերումն է, յուրացումը նրա, ինչ մինչ այդ չեք արել:

Անձնական պլանում փոխվում են՝ զուգընկերոջ հետ փոխհարաբերությունների մասին ձեր պատկերացումները: Ընտանիքում խորհուրդ է տրվում պահպանել համբերատարություն:

Երիտասարդներին սպասվում են նոր հանդիպումներ: Կապիկը նրանց խորհուրդ է տալիս լինել չափազանց շրջահայաց: Կա սխալվելու հավանականություն, ինչը, ի դեպ, կհասցնի հիասթափության ու զղջումի:

Ձեր կարիերային ոչ մի խոչընդոտ չի սպառնում, ավելին, կբացվեն նոր հեռանկարներ: Հավանաբար ստանաք ձեր մակարդակին համապատասխան պաշտոն: Ֆինանսների տեսակետից՝ այսօր սովորեք բավարարվել եղածով, որպեսզի վաղը ստանաք ավելին:

Առողջական պլանում՝ վերանայեք սնվելու համակարգը, պահպանեք ռեժիմ, զբաղվեք մարզանքով: Խուսափեք ծանրաբեռնված աշխատանքից:



### ԱՌՅՈՒԾ
### (22.07- 22.08)

Այս տարի դուք զբաղված կլինեք աշխարհիկ գործերով: Կունենաք նյութական վիճակի բարելավման հիանալի հնարավորություններ: Դուք արդեն ապացուցել եք շրջապատին, թե ինչի եք ընդունակ, նվաճել եք շրջապատի հարգանքն ու վստահությունը, հիմա կարեւոր է՝ զբաղեցնել ավելի համեստ դիրքեր, սովորել՝ չառանձնանալ ընդհանուրից: Եթե ձեզ հաջողվի դա անել, մնացյալ անհրաժեշտը ինքն իրեն կգա ձեր կյանք, իսկ դուք՝ հասարակության մեջ կլինեք հարգված ու ներկայանալի:

Կապիկը ձեզանից պահանջում է խուսափել ռիսկից եւ արկածախնդրությունից: Սովորեք վստահել սեփական ուժերին եւ հնարավորություններին: Հարազատների հետ հարաբերություններում խուսափեք վեճերից, էներգիայի ավելորդ ծախսումը կանդրադառնա առողջության վրա:

Հիմա անհրաժեշտ է կողակցի հետ լինել միասին՝ որպես լիարժեք ամբողջություն, հարկ եղած դեպքում՝ բարդություններից խուսափելու համար, զիջել նրան:

Իրենց կեսին չգտած միայնակները տարվա սկզբին, հավանաբար, ունենան հետաքրքիր ու խոստումնալից հանդիպում:

Ձեր աշխատանքը եւ կարիերան կընթանա հարթ, առանց ճգնաժամերի եւ անկումների: Մեծ հաջողություններ կունենաք ստեղծագործական ասպարեզում: Դուք կհայտնաբերեք ձեր բնատուր կոչումը, ինչի մասին, ի դեպ, վաղուց երազել եք: Ֆինանսական վիճակը ողջ տարի կլինի գերազանց:

Ընդհանուր առմամբ, ձեր առողջությունը կլինի լավ, եւ դա՝ ձեր հզոր ներուժի շնորհիվ: Հենց այդ ուժը կօգնի ձեզ դիմադրել ցանկացած հիվանդություն եւ մնալ հաղթող:



### ԿՈՒՅՍ
### (23.08 - 22.09)

Ընթացիկ տարին ձեզ համար կլինի վճռորոշ եւ կարեւոր: Եկել է ժամանակը՝ իրագործել այն, ինչ վաղուց ի վեր ուզում էիք: Կողմնորոշվեք սեփական ցանկություններում եւ զգացմունքներում՝ չենթարկվելով թելադրող հանգամանքների: Թեպետ հնարավոր են անխուսափելի բարդություններ, այնուհանդերձ, այս տարի դուք կանեք շատ ավելին՝ ինչը կկարեւորվի հետագա ճակատագրում: Հենց այդ պատճառով էլ, ընդունեք վճռական որոշումներ: Այդ ժամը հասել է:

Ձեր խնդիրն է՝ հստակ պատասխանել ինքներդ ձեզ՝ «Ո՞վ եմ ես», «Ի՞նչ եմ սպասում կյանքից», «Ի՞նչն է ինձ համար կարեւոր»: Այս արդյունքում՝ ձեզ կզգաք առավել ազատ, եւ հիմա դա է ճիշտը:

Կողակցի հետ համատեղ կյանքում՝ շնորհակալ եղեք նրանից՝ տվածի համար, ապա միայն՝ ձեռնամուխ եղեք «վերակառուցել» ինքներդ ձեզ:

Զուգընկեր փնտրողին՝ Կապիկը խորհուրդ է տալիս երկարատեւ, կայուն հարաբերությունների հույսեր չկապել: Արժանի պարտնյորի կհանդիպեք ա՛յն պայմանով, եթե լրջորեն զբաղվեք սեփական անձի վերափոխմամբ:

Կարիերայում պահանջվում է՝ նախապատվությունը տալ սեփական տաղանդն ու ընդունակությունները բացահայտող գործերի:

Ֆինանսական հարցերում ցուցաբերեք զգուշություն՝ գործընկեր ընտրելիս: Ունեք կողմնակի եկամուտ գտնելու շանս:

Ձեր առողջությանը ոչ մի լուրջ սպառնալիք չի սպասվում: Այնուհանդերձ, եղեք առավելագույն չափով ուշադիր սննդի որակի հարցում՝ հավանական թունավորումից խուսափելու համար:



### ԿՇԵՌՔ
### (23.09 - 22.10)

Տարին ձեզանից պահանջում է լինել դիմացկուն, ինչը ձեզ լիովին կհաջողվի, եւ արդեն տարվա վերջում դուք ձեզ հաղթող կզգաք: Կյանքի տվյալ հատվածն ընդունեք՝ որպես առաջիկա մեծ փոփոխությունների նախապատրաստման շրջան: Խուսափեք շրջապատում առանձնանալու փորձերից, աշխատեք լինել ստվերում եւ ուշադիր հետեւեք կատարվող իրողություններին:

Կարեւոր որոշումները, հնարավորության դեպքում, տեղափոխեք աշնան համար, այդ կերպ դուք կկարողանաք խուսափել խոչընդոտներից:

Տարվա գլխավոր խնդիրը կապված է սեփական ներաշխարհի ճանաչմանը եւ հոգեւոր զարգացմանը: Ինքնագնահատման եւ որոշումներ ընդունելու ճանապարհին ծագած բարդությունները, կասկածները, տագնապները կարող են հասցնել դեպրեսիաների: Նման դեպքերում դիմեք սրտակից բարեկամի...

Անձնական կյանքում սպասվում են աննախադեպ շրջադարձեր: Ջանացեք ընդունել ձեր կողակցի խորհուրդները:

Եթե դեռ չեք հանդիպել կյանքի արժանի ուղեկցի, ապա մի լավ դիտեք ու զննեք ձեր շուրջբոլորը,- հենց հիմա կարող եք հանդիպել ձեր ճակատագրին:

Ինչ վերաբերում է աշխատանքին, ապա այս տարի միտք չունի զբաղվել՝ այդ ուղղությամբ աճելու հարցով: Հիմա դրա ժամանակը չէ: Եթե դուք կենտրոնանաք ներաշխարհի զարգացման ուղղությամբ, ապա հենց հոգեաշխարհի փոփոխությունը կդառնա՝ ապագայում՝ աշխատանքի ասպարեզում առաջընթացի հասնելու գրավական:

Իսկ նյութական ապահովության ձգտումներում՝ մեր խորհուրդն է՝ զգուշանալ ֆինանսական ավելորդ ծախսերից:

Առողջական խնդիրներից ազատվելու համար՝ նախեւառաջ՝ խուսափեք ավելորդ հուզականությունից:



### ԿԱՐԻՃ
### (23.10 - 21.11)

Տարին խոստանում է լինել հետաքրքիր: Դուք հիմա ունեք հնարավորություն՝ ազատվելու այն ամենից, ինչ հնացել է եւ խանգարում է ձեր աճին: Ինքնին, այս պարագայում, անհնար է խուսափել ճգնաժամերից: Մյուս կողմից՝ հենց դրանք կաջակցեն ձեր զարգացմանը:

Տարվա երկրորդ կեսին հարկ կլինի հաշվի նստել սեփական ներաշխարհի հետ,- ջանացեք ազատվել նեգատիվ հատկանիշներից: Ձեր խնդիրն է՝ պահպանել լիարժեք գիտակցականություն եւ հաղթել չարին:

2016-ի ձեր գլխավոր հիմնախնդիրը հին սովորույթներից հրաժարվելն է: Աշխատեք փոխըմբռնում հաստատել շրջապատի հետ, հեռու մնալ կոնֆլիկտներից:

Անձնական պլանում՝ ամենագլխավոր առաջնահերթությունն՝ ընտանիքում հոգեկան ներդաշնակություն ստեղծելն է: Հիշեք՝ սիրել՝ նշանակում է նայել աշխարհին միեւնույն ուղղությամբ:

Մայիսին Կարիճին սպասվում է նոր ծանոթություն, որը կարող է վերածել կայուն հարաբերությունների:

Ձեր կարիերան հիմա ենթակա չէ ձեր իրավասությանը: Ահա ինչու, լավագույն քայլը եւ հաջողության գրավականը, այս դեպքում, վիճակի հետ հաշտվելն է: Վստահեք նախախնամությանը եւ պահպանեք հոգու խաղաղություն: Շանսը կգա անսպասելի, այն պայմանով միայն, եթե դուք սեւեռուն կերպով չձգտեք նյութականի, հոգեպես կարողանաք մոռանալ կարիերայի եւ աշխատանքի թեման: Ձեր խնդիրն է՝ դառնալ մաքուր մի էջ, ուր Կյանքը կգրի բոլորովին նոր գիրք... Եվ չփորձեք հրաժարվել՝ ձեզ այժմ աննշան թվացող փոքրիկ առաջարկություններից,- հենց դրանք կարող են դառնալ այն աստիճանները, որոնք կբերեն կարիերայի հաջողություն:

Խնայեք ձեր ներքին էներգիան: Այժմ կարեւոր է հետեւել սննդին, օրվա առողջ ռեժիմին: Ընդհանուր առմամբ, ձեր առողջությունը ողջ տարի կմնա կայուն:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

# ԿԱՊԻԿԸ՝ ՏԱՐՎԱ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԴԵՄՔԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 6-րդ էջում)



### ԱՂԵՂՆԱՎՈՐ
### (22.11 - 21.12)

Տարին ձեզ համար կլինի բավականին հաջող: Առանձնապես այն ուղղությամբ, որը կվերաբերի մասնագիտական գործունեությանն ու՝ կարիերայում աճին: Այնպես որ, ժամանակն է՝ ղեկն առնել ձեռքը եւ հավակնել ամենաhարգի դիրքերի: Հիմա շատ կարեւոր է կենտրոնանալ ձեզ համար ամենակարեւորի վրա, տարբերակեք բոլոր նպատակները եւ թողեք միայն գլխավորը:

Սիրո հարցում՝ ձեզ համար միեւնույն է, այնպես որ՝ զվարճացեք ամենայն խաղաղությամբ եւ ներդաշնակությամբ:

Աղեղնավորն այժմ ապրում է ինքնաճանաչման եւ ինքնամաքրման մի շրջան, ինչը կտա հնարավորություն՝ հետագայում անելու այն, ինչ կարեւոր կլինի իր կյանքում:

Երիտասարդ ամուրիները կգտնեն իրենց փնտրածին, ի դեպ, կսիրահարվեն առաջին հայացքից:

Ընտանիք ունեցողները, բոլոր նախաձեռնություններում, կզգան կողակցի սատարումը:

Ձեր կարիերայի համար՝ այս տարին համարվում է վճռորոշ: Կմիատեղվեն գիտակցված նպատակամղվածությունը եւ մասնագիտական զարգացումը: Այնպես որ, ձեր նպատակին կհասնեք առանց առանձնակի ջանքերի: Վատ չեն լինի նաեւ ֆինանսական հարցերը: Դուք հիմա պատրաստ եք փոխել ձեր վիճակը եւ չեք վախենում փոփոխություններից:

Առողջականին առանձնակի վտանգ չի սպառնում, բայցեւ, ողջ տարին կարող է իրեն զգացնել տալ էներգիայի պակասը:



### ԱՅԾԵՂՋՅՈՒՐ
### (22.12 - 19.01)

2016-ը ձեզ համար խոստանում է լինել հետաքրքիր, հաջող, ի հայտ կգան հիանալի հնարավորություններ, որոնք հիմնականում կապված կլինեն ուսումնառության, հոգեւոր զարգացման, ճանապարհորդության հետ: Հիշեք՝ հիմա շատ կարեւոր է՝ ձեւավորել արժեքների եւ իդեալների սեփական համակարգը: Հենց դա էլ հետագայում կնպաստի՝ աշխարհիկ կյանքում ձեր կարգավիճակի ամրապնդմանը: Ընդհանուր առմամբ, դուք հիմա էներգիայով եւ նպատակասլացությամբ լի մարդ եք, բայց, երբեմն, հանդես եք բերում ավելորդ հուզականություն:

2016-ը կարող է դառնալ ձեր կյանքի ամենահաջող տարիներից մեկը, եթե ցուցաբերեք ակտիվություն, ճանապարհորդեք՝ հարստացնելով ձեր աշխարհայացքը՝ հնարավոր բոլոր միջոցներով:

Անձնական կյանքում ամեն ինչ բավականին լավ կլինի, եթե միայն սանձեք ձեր՝ անընդմեջ փոփոխությունների հասնելու ձգտումը:

Աշխատանքային եւ բիզնեսի հետ կապված նախաձեռնությունները, եթե սկսեք աշնանը, կպսակվեն հաջողությամբ եւ կբերեն զգալի եկամուտ:

Այծեղջյուրի առողջությունը բավականին լավ է, այդ ուղղությամբ անհանգստանալու առանձնակի պատճառներ չի ունենա:



### ՋՐՀՈՍ
### (20.01 - 19.02)

Ջրհոսների համար տարին կլինի հետաքրքիր եւ, շատ հարցերում, անկանխատեսելի: Մի' կառչեք կայունությանը եւ խաղաղությանը, հիմա կարեւոր տեղաշարժեր են լինում, որոնցից չարժի երկյուղել:

Կարիերա, ֆինանսներ, անձնական կյանք եւ այլ երկրային ոլորտները, այժմ. նահանջում են երկրորդ պլան՝ զիջելով անտեսանելիի խորհրդին ու նրա հանդեպ ձեզանում ծագած հետաքրքրությանը: Այստեղ ձեր խնդիրն է՝ բացահայտել կյանքի եւ մահվան, անցյալի եւ ապագայի գաղտնիքները, հաղթահարել վախը, կասկածները եւ՝ հաղթությամբ դուրս գալ այդ շրջանակից:

Ջրհոսի համար եկել է՝ նյութականի կողքին, հավասարապես, հոգեւորը տեսնելու եւ այդ ուղղությամբ մտորելու ժամանակը: Եթե դուք չգիտակցեք այս պահը, կարող եք բախվել որոշ ճգնաժամերի:

Հենց տարվա սկզբից՝ դուք կցանկանաք բարվոքել ձեր բնակարանային պայմանները, վերանորոգել այն եւ՝ դարձնել ձեր տունը հարմարավետ ու ջերմ:

Կարիերայի աճի տեսակետից՝ տարին չեզոք կլինի, բայց դա բնավ չի նշանակում պասսիվություն, ավելին, հատկապես ձմռանը կնկատվի ակտիվություն, դուք կբարձրաձայնեք ձեր պահանջները՝ աշխատավարձի բարձրացման հարցով: Բայց փորձեք դա անել խաղաղ, առանց վեճի:

Առողջությունը պահպանելու համար՝ ջանացեք փոխել ապրելաոճը, այսինքն՝ կանոնավոր սնունդ, աշխատաժամերի հնարավորին չափի կրճատում: Խուսափեք գերհոգնելուց:



### ՁԿՆԵՐ
### (20.02 - 20.03)

Տարին կլինի նշանակալից եւ հետաքրքիր: Հիմա շատ կարեւոր շրջան է անձնական զարգացման ուղղությամբ, ինչից եւ կախված կլինի ձեր ապագան: Մի' երկնչեք եւ մի' դժգոհեք հնարավոր դժվարություններից. ձեզ սատարում են Երկնային ուժերը:

Առանցքային տեղաշարժեր են սպասվում անձնական փոխհարաբերություններում: Ընդ որում, դրանք զգալիորեն կանդրադառնան ընդհանուր առմամբ ձեր աշխարհայացքի վրա եւ՝ սեփական անձի հանդեպ ունեցած կարծիքին:

Դուք լուրջ եւ ներդաշնակ կապի մեջ եք աշխարհի հետ, եւ դա ձեզ հաճելի է: Ինքնավստահ եք եւ պատրաստ փոխըմբռնման:

Կապիկը զգուշացնում է՝ ձեռնպահ մնալ կասկածելի ծրագրերի մասնակցելուց եւ դրանցում փողային ներդրումներից: Փոխարենը, Ձկներին նույնպես, անձնական հարցում խորհուրդ է տալիս հաճախակի նայել չորս կողմ, փնտրել սրտի ընտրյալին. Հիմա կարեւոր է գիտակցել, որ ամուսնությունը ձեզ համար անհրաժեշտություն է:

Կարիերայի ճանապարհին պահանջվում է համբերատարություն, որի բեղուն հունձքը Ձուկը կվայելի աշնանը: Կարեւորը սեփական ուժերին վստահելն է:

Եթե ուզում եք չունենալ առողջական խնդիրներ, աշխատեք քիչ մտածել հիվանդությունների մասին: Հիվանդանալու դեպքում, առանց որեւէ դժվարության կստանաք լիարժեք բուժում:

*Պատրաստեց*
*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

**«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ**

## ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆԸ

*Հունվարի 14-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի Եվրոպայի գործերով պատասխանատու, Եվրոպայի հարցերով ԱՄՆ նախագահի գլխավոր խորհրդատու Չարլզ Կուպչանին:*



Հանդիպմանն անդրադարձ է եղել անվտանգության ոլորտում համագործակցությանը, Հայաստան-ՆԱՏՕ փոխգործակցությանը, խաղաղապահ առաքելություններին Հայաստանի մասնակցությանը, միջազգային արդի խնդիրներին ու մարտահրավերներին, տարածաշրջանում առկա իրավիճակին, ԼՂ հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացին, ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման հեռանկարին եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցերի:

Չարլզ Կուպչանը նշեց, որ Միացյալ Նահանգները բարձր է գնահատում Հայաստանի հանձնառությունը աշխարհում խաղաղության եւ անվտանգության ապահովման գործում ստանձնած միջազգային պարտավորություններին եւ գոհունակությամբ է փաստել, որ Հայաստանն այդ առումով պատրաստակամ է նպաստել ՆԱՏՕ-ի միջազգային եւ բազմակողմ ձեւաչափով այլ կազմակերպությունների ջանքերին:

## ՀԱՍՏԱՏՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

*Հայաստանի կառավարությունը հաստատեց 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը եւ գերակա խնդիրները:*



Այս տարի, օրինակ, նախատեսվում է սկսել Իրան-Հայաստան 400 կվտ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի շրջանակներում սարքավորումների ներկրման, հենասյուների մոնտաժման աշխատանքը: Ծրագրով նախատեսվում է հարկային համակարգի ստորաբաժանումների կառուցվածքային օպտիմալացում, կգործարկվեն նաեւ ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն, Գոգավան, Բավրա վերակառուցվող անցումային կետերը:

Նախատեսվում են նաեւ բարեփոխումներ պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ, մեկ հարկային հաշվի ներդրման նախնական աշխատանքների իրականացում, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շարունակություն եւ այլ աշխատանքներ:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

*Հունվարի 12-ին Հայաստանի ճանապարհային ոստիկանության իրավաբանական վարչության պետ Արմեն Չիլինգարյանը ներկայացրեց ճանապարհային երթեւեկության կանոններում իրականացվելիք փոփոխությունները:*

Նրա խոսքերով, մի շարք օրենքներում կատարված փոփոխություններով սահմանվել են տեսանկարահանող սարքերի միջոցով արձանագրված իրավախախտումների որոշակի ընթացակարգեր Հայաստանում չգրանցված մեքենաների համար: «Այսինքն, այն անձը, ով Հայաստան է ներմուծել այլ երկրում գրանցված տրանսպորտային միջոց, նա էլ կստանձնի այդ տրանսպորտային միջոցի խախտման պատասխանատվությունը: Ծանուցումները նկարահանող համակարգերի միջոցով հասանելի կլինեն սահմանային մաքսային կետերում: Սահմանապահները կտեղեկացնեն, որ կան ծանուցման ենթակա վարչական ակտեր, որից հետո ոստիկանության կողմից կիրականացվի համապատասխան ծանուցում եւ երկամսյա ժամկետում, եթե տուգանքը վճարվի, ապա որեւէ խնդիր չի առաջանա, իսկ եթե չեն վճարի, մեկ տարի ժամկետով Հայաստան մուտքի վիզա չեն ստանա»,- բացատրեց Չիլինգարյանը՝ հստակեցնելով, որ խոսքը գնում է այն դեպքերի մասին, երբ պատասխանատու անձը համարվում է ոչ Հայաստանի քաղաքացի:

Արմեն Չիլինգարյանը նշեց նաեւ, որ ճանապարհային երթեւեկության կանոնների նվազ խախտումների համար ճանապարհային ոստիկանությունը վարորդներին տուգանելու փոխարեն կնախազգուշացնի:

## ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ

*Հունվարի 12-ին լրացավ Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության տարելիցը:*

Ի հիշատակ Ավետիսյանների ընտանիքի սպանված անդամների, Գյումրու Սբ. Աստվածածին (Յոթ վերք) եկեղեցում կատարվեց հոգեհանգստի կարգ ու մոմավառություն, իսկ մինչ այդ հարազատները, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներն այցելեցին Ավետիսյանների շիրիմներին:

Թեեւ դեպքից մեկ տարի անց Գյումրիում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազայի զինծառայող Վալերի Պերմյակովն արդեն դատապարվել է տասը տարվա ազատազրկման ՌԴ քրեական օրենսգրքի երեք հոդվածներով նախատեսված «դասալքություն», «զենքի հափշտակում» եւ «զենքի ապօրինի կրում» մեղադրանքներով, եւ արդեն մեկնարկել է Վալերի Պերմյակովի նկատմամբ հայկական կողմի դատավարությունը, սակայն, գյումրեցիների կարծիքով, իրականության վրա լույս սփռված չէ: Ավետիսյանների հարազատները եւս չեն հավատում, որ իրականությունը մի օր կպարզվի: Դժգոհություն կա նաեւ հայկական կողմի դատավարությունը ռուսական ռազմաբազայի տարածքում անցկացնելու վերաբերյալ: Սպանված Ավետիսյանների հարազատները հայտարարեցին, որ չեն մասնակցի ռուս զինծառայող Վալերի Պերմյակովի գործով դատական նիստին, եթե այն կրկին տեղի ունենա ռուսական ռազմաբազայի տարածքում:

# «ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԵՏ




**ՀՈՒՆՎԱՐ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 4 | 11 | 18 | 25 |
| Երք. | | 5 | 12 | 19 | 26 |
| Չրք. | | 6 | 13 | 20 | 27 |
| Հինգ. | | 7 | 14 | 21 | 28 |
| Ուրբ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Շաբ. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Կիր. | 3 | 10 | 17 | 24 | 31 |

**ՓԵՏՐՎԱՐ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Երք. | 2 | 9 | 16 | 23 | |
| Չրք. | 3 | 10 | 17 | 24 | |
| Հինգ. | 4 | 11 | 18 | 25 | |
| Ուրբ. | 5 | 12 | 19 | 26 | |
| Շաբ. | 6 | 13 | 20 | 27 | |
| Կիր. | 7 | 14 | 21 | 28 | |

**ՄԱՐՏ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 7 | 14 | 21 | 28 |
| Երք. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Չրք. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Հինգ. | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| Ուրբ. | 4 | 11 | 18 | 25 | |
| Շաբ. | 5 | 12 | 19 | 26 | |
| Կիր. | 6 | 13 | 20 | 27 | |

**ԱՊՐԻԼ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 4 | 11 | 18 | 25 |
| Երք. | | 5 | 12 | 19 | 26 |
| Չրք. | | 6 | 13 | 20 | 27 |
| Հինգ. | | 7 | 14 | 21 | 28 |
| Ուրբ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Շաբ. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Կիր. | 3 | 10 | 17 | 24 | |

**ՄԱՅԻՍ**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Երք. | | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| Չրք. | | 4 | 11 | 18 | 25 | |
| Հինգ. | | 5 | 12 | 19 | 26 | |
| Ուրբ. | | 6 | 13 | 20 | 27 | |
| Շաբ. | | 7 | 14 | 21 | 28 | |
| Կիր. | 1 | 8 | 15 | 22 | 29 | |

**ՀՈՒՆԻՍ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 6 | 13 | 20 | 27 |
| Երք. | | 7 | 14 | 21 | 28 |
| Չրք. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Հինգ. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Ուրբ. | 3 | 10 | 17 | 24 | |
| Շաբ. | 4 | 11 | 18 | 25 | |
| Կիր. | 5 | 12 | 19 | 26 | |

**ՀՈՒԼԻՍ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 4 | 11 | 18 | 25 |
| Երք. | | 5 | 12 | 19 | 26 |
| Չրք. | | 6 | 13 | 20 | 27 |
| Հինգ. | | 7 | 14 | 21 | 28 |
| Ուրբ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Շաբ. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Կիր. | 3 | 10 | 17 | 24 | 31 |

**ՕԳՈՍՏՈՍ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Երք. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Չրք. | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| Հինգ. | 4 | 11 | 18 | 25 | |
| Ուրբ. | 5 | 12 | 19 | 26 | |
| Շաբ. | 6 | 13 | 20 | 27 | |
| Կիր. | 7 | 14 | 21 | 28 | |

**ՍԵՊՏԵՄԲԵՐ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 5 | 12 | 19 | 26 |
| Երք. | | 6 | 13 | 20 | 27 |
| Չրք. | | 7 | 14 | 21 | 28 |
| Հինգ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Ուրբ. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Շաբ. | 3 | 10 | 17 | 24 | |
| Կիր. | 4 | 11 | 18 | 25 | |

**ՀՈԿՏԵՄԲԵՐ**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| Երք. | | 4 | 11 | 18 | 25 | |
| Չրք. | | 5 | 12 | 19 | 26 | |
| Հինգ. | | 6 | 13 | 20 | 27 | |
| Ուրբ. | | 7 | 14 | 21 | 28 | |
| Շաբ. | 1 | 8 | 15 | 22 | 29 | |
| Կիր. | 2 | 9 | 16 | 23 | 30 | |

**ՆՈՅԵՄԲԵՐ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 7 | 14 | 21 | 28 |
| Երք. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Չրք. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Հինգ. | 3 | 10 | 17 | 24 | |
| Ուրբ. | 4 | 11 | 18 | 25 | |
| Շաբ. | 5 | 12 | 19 | 26 | |
| Կիր. | 6 | 13 | 20 | 27 | |

**ԴԵԿՏԵՄԲԵՐ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երկ. | | 5 | 12 | 19 | 26 |
| Երք. | | 6 | 13 | 20 | 27 |
| Չրք. | | 7 | 14 | 21 | 28 |
| Հինգ. | 1 | 8 | 15 | 22 | 29 |
| Ուրբ. | 2 | 9 | 16 | 23 | 30 |
| Շաբ. | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| Կիր. | 4 | 11 | 18 | 25 | |

**ՀՈՒՆՎԱՐ.** 1, 2 - Նոր տարի, 7 - Սուրբ Ծնունդ, 19 - Ջրօրհնեք: **ՄԱՐՏ.** 3 - Մայրության օր, 8 - Կանանց միջազգային օր: **ԱՊՐԻԼ.** 9 - Վրաստանի ազգային միասնության օր, 29 - Կարմիր ուրբաթ: **ՄԱՅԻՍ.** 1 - Սուրբ Զատիկ, 2 - Հանգուցյալների հիշատակի օր: 9 - Հաղթանակի օր, 12 - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր, 26 - Վրաստանի պետական անկախության վերականգնման օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 28 - Մարիամոքա: **ՀՈԿՏԵՄԲԵՐ.** 14 - Մցխեթոբա: **ՆՈՅԵՄԲԵՐ.** 23 - Գիորգոբա:

Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոները, որոնք Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են: - **ՀՈՒՆՎԱՐ.** 5 - Ճրագալույցի տոն, 6 - Սուրբ Ծնունդ եւ Աստվածահայտնության տոն (Ջրօրհնեք), 7 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՄԱՐՏԻ.** 27 - Սուրբ Զատիկ, 28 - Հանգուցյալների հիշատակի օր: **ԱՊՐԻԼ.** 24 - Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: **ՀՈՒԼԻՍ.** 27 - Պայծառակերպություն: **ՕԳՈՍՏՈՍ.** 17 - Վերափոխում: **ՍԵՊՏԵՄԲԵՐ.** 13 - Խաչվերաց:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբրնենլի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445